ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4

ք. Երևան «13» 01 2022թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար Վահան Նարիբեկյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Դաղունցի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սեփականության իրավունքով Պատվիրատուին պատկանող Պայմանագրի N 1"1 Հավելվածով սահմանված թվով 42 տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ՏՄ) օգտագործումից բխող պատասխանատվության (սահմանված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքով) պարտադիր ապահովագրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Սույն դրույթը չի արգելում Կողմերին փոխադարձ համաձայնությամբ փոփոխել և/կամ լրացնել սույն Պայմանագրի համաձայն ապահովագրման ենթակա ՏՄ-երի ցանկը:

1.2 Պայմանագրի համաձայն ապահովագրվող յուրաքանչյուր ՏՄ-ի համար ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարները, ապահովագրական պատահարները և դրանց բացառությունները, հատուցվող վնասները և դրանց բացառությունները, վնասների կարգավորման գործընթացը (ներառյալ՝ ապահովագրական հատուցման վճարման ընթացակարգը), չհատուցվող գումարը, Կողմերի այլ իրավունքներն ու պարտականությունները, ապահովագրության դադարեցման և/կամ ապահովագրության էական պայմանների փոփոխման կարգը սահմանվում են ապահովագրական գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով, այդ թվում՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքով, ինչպես նաև Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի կանոններով (ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով), որոնք կիրառվում են անմիջականորեն:

1.3 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.2 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Սույն Պայմանագրի համաձայն յուրաքանչյուր ՏՄ-ի ապահովագրման համար սույն Պայմանագրի ստորագրումից հետո առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել սույն Պայմանագրի Հավելված 1.1-ով սահմանված տվյալները և փաստաթղթերը: Տվյալները և փաստաթղթերը Կատարողին տրամադրվում են առձեռն՝ ատացողի՝ սույն Պայմանագրում սահմանված հասցեով և/կամ Կատարողի մասնաճյուղ և/կամ լիազորված ներկայացուցչին ներկայացնելու միջոցով:

2.2.2 Պայմանագրի 2.2.1 կետով նախատեսված տվյալների և փաստաթղթերի տրամադրումը իրականացնել էլեկտրոնային փոստի և/կամ ֆաքսիմիլային կապի միջոցներով: Այս դեպքում տվյալների և փաստաթղթերի տրամադրման ժամկետ է համարվում դրանց ստացման և դրանց ամբողջականության վերաբերյալ Կատարողի կողմից Պատվիրատուին տրված ծանուցման ժամկետը:

2.2.3 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.4 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել և ստանալ լրացուցիչ տվյալներ՝ սույն Պայմանագրի 1.1 կետում նախատեսված իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որոնք անհրաժեշտ են սույն Պայմանագրով նախատեսված ՏՄ-երի ապահովագրման համար: Կատարողը Պատվիրատուի կողմից ներկայացված՝ սույն Պայմանագրի 2.2.1 կետով նախատեսված տվյալների և փաստաթղթերի իսկության և արժանահավատության համար պատասխանատվություն չի կրում:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է ապահովագրել Պատվիրատուի՝ սույն Պայմանագրի 1-ին բաժնում նշված՝ սահմանված կարգով հայտարարագրված ՏՄ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է սահմանված կարգով Կատարողին տրամադրել ապահովագրման ենթակա տրանսպորտային միջոցների ապահովագրման համար անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը:

Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

3 ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 2241000 (երկու միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 100% Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Կողմերը համաձայնում են, որ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատսախանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում Կատարողի կողմից կիրառվող ապահովագրավճարների սանդղակը գործող է սույն Պայմանագրի կնքման պահի դրությամբ, սակայն կարող է փոխոխվել հետագայում Կատարողի կողմից: Սույն կետով նախատեսված ցանկացած փոփոխության դեպքում՝ այդ փոփոխության օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու պահից, այդ փոփոխությունը համարվում է կատարված նաև սույն Պայմանագրի Հավելված 1.3-ում:

6 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 12 ամիս, եթե այլ բան սահմանված չէ համապատասխան ապահովագրության Պայմանագրով (վկայագրով):

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	**«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ**
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	**ք. Երևան, Վարդանանց 16**
ՀՎՀՀ 00008519	**ՀՎՀՀ 02574465**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**Արդշինբանկ ՓԲԸ՝ Հ/Հ 247010050745**
Հ/Հ 900011020089	**տնօրեն՝ Ա. Դաղունց**
ՀՀ ԱԺ աշխատակազմի	
ղեկավար-գլխավոր բարտուղար	
Վ. Նարիբեկյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 13 » 01 2022 թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	66511170/2	**ՀՀ Ազգային ժողովի հաշվեկշռում հաշվառված թվով 42 տրանսպորտային միջոցների ապահովագրության ծառայություններ**	դրամ	2241000	1	Ըստ պատվիրատուի նախատեսված վայրի	12 ամիս

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար
Վ.Նարիբեկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 16
ՀՎՀՀ 02574465
Արդշինբանկ ՓԲԸ՝ Հ/Հ
247010050745
տնօրեն՝ Ա. Դաղունց

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«13» 01 2022 թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ

Պայմանագրով սահմանված կարգով ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի) կնքման համար «Ապահովադիրը» «Ապահովագրողին» է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և տվյալները՝ «Ապահովադրի», ապահովագրվող տրանսպորտային միջոցի և առանձին տրանսպորտային միջոցի լիազորված տիրապետողի վերաբերյալ.

1. Ապահովադրի անվանումը՝ հայերեն և անգլերեն լեզուներով
2. Ապահովադրի ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը
3. Ապահովադրի պետական գրանցման վկայականի պատճենը
4. Ապահովադրի ՀՎՀՀ
5. Ապահովադրի գտնվելու վայրը (հասցե, հեռախոս)
6. Ապահովադրի բանկային հաշվի տվյալները
7. Ապահովագրվող տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի պատճենը
8. Լիազորված տիրապետող (ներ) ի անձնագր (եր) ի պատճեն (ներ) ը
9. Լիազորված տիրապետող (ներ) ի սոցիալական քարտ (եր) ի պատճեն (ներ) ը
10. Լիազորված տիրապետող (ներ) ի վարորդական վկայական (ներ) ի պատճեն (ներ) ը
11. Տրանսպորտային միջոցի շահագործման հիմնական վայրը
12. Տրանսպորտային միջոցի շահագործման նպատակը
13. Տրանսպորտային միջոցի վազքը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ **ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19** **ՀՎՀՀ 00008519** **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** **Հ/Հ 900011020089** **ՀՀ ԱԺ աշխատակազմի** **ղեկավար-գլխավոր քարտուղար** **Վ.Նարիբեկյան**	**«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ** **ք. Երևան, Վարդանանց 16** **ՀՎՀՀ 02574465** **Արդշինբանկ ՓԲԸ՝ Հ/Հ** **247010050745** **տնօրեն՝ Ա. Դաղունց**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«13» 01 2022թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված տեսակը համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	66511170/2	փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ /4215/	2241000	2241000	2241000	2241000	2241000	2241000	2241000	2241000	2241000	2241000	2241000	2241000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար
Վ.Նարիբեկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 16
ՀՎՀՀ 02574465
Արդշինբանկ ՓԲԸ՝ Հ/Հ 247010050745
տնօրեն՝ Ա. Դաղունց

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 13 » 01 2022թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« 13 » 01 2022 թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն